

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«---» 2017 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի «0721.07.4 Յուրի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» բաժնում «Վարպետ՝ կաթնային և կաթնաթթվային մթերքների արտադրության» բառերը փոխարինել «Կաթի և կաթնամթերքի արտադրության ապարատավար-օպերատոր» բառերով,

2) N 2 հավելվածում՝

ա. հանել «0414.03.5 Արտադրանքի ստանդարտացում, տեխնիկական կանոնակարգում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում)» տողը,

բ. «0728.09.5 Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում)» տողում «Տեխնիկ՝ արտադրանքի ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման» բառերը փոխարինել «Տեխնիկ-փորձագետ՝ արտադրանքի ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման» բառերով,

գ. «1015.01.5 Զբոսաշրջություն» տողում «3,5» թվերը փոխարինել «3» թվերով, իսկ «2,5» թիվը՝ «2» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Համաձայն «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված 6-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, անհրաժեշտություն է առաջացել համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ՀՀ կրթության և գիտության համապատասխան հրամաններով հաստատված պետական կրթական չափորոշիչներին:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ով նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «0721.07.4 Յուդի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության «0721.07.06.4 Վարպետ՝ կաթնային և կաթնաթթվային մթերքների արտադրության» որակավորումն է սահմանված, իսկ հավելված N 2-ով միջին մասնագիտական կրթության 1015.01.5 «Զբոսաշրջություն» մասնագիտության «Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման» որակավորման ուսումնառության ժամկետ է սահմանված՝ կրթության առկա ձևով հիմնական կրթության հիմքով՝ 3.5 տարի, միջնակարգ կրթության հիմքով՝ 2.5 տարի, կրթության հեռակա ձևով՝ 3.5 տարի, ինչպես նաև «0728.09.5 Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում)» մասնագիտության «0728.09.01.5 Տեխնիկ՝ արտադրանքի ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման» որակավորումն է սահմանված:

Համաձայն «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված 6-րդ մասի՝ սահմանված կարգով գործատուների, ուսումնական հաստատությունների և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ վերանայվել է վերոնշյալ

մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները, որը հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով:

Վերանայված պետական կրթական չափորոշիչով՝ «0721.07.4 Յուդի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» և «0728.09.5 Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում)» մասնագիտությունների որակավորումները սահմանել «Կաթի և կաթնամթերքի արտադրության ապարատավար-օպերատոր» և «Տեխնիկ-փորձագետ՝ արտադրանքի ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման» և «1015.01.5 Զբոսաշրջություն» մասնագիտության «Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման» որակավորման ուսումնառության ժամկետը է սահմանել՝ կրթության առկա ձևով հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի, միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի, կրթության հեռակա ձևով՝ 3 տարի, ինչը հիմք է հանդիսացել որոշման նախագծի մշակմանը:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

Համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի և ՀՀ կրթության և գիտության համապատասխան հրամաններով հաստատված պետական կրթական չափորոշիչների առկա տարբերությունը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունման արդյունքում կունենանք համապատասխանեցված մասնագիտությունների ցանկեր:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումն այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման վերաբերյալ շահագրգիռ գերատեսչություններից ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

| Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|--|--------------------------|--|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2017-02-03 թիվ 040/3726-17 գրություն | Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի | | |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 2017-02-29 թիվ 034/4572-17 գրություն | Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի | | |
| ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 2017-02-06 թիվ 06/3822-17 գրություն | <p>1. Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի</p> <p>2. Համակարգային լուծումներ ունենալու տեսանկյունից առաջարկում ենք հետագայում դիտարկել նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունների ցանկերում ներառված մասնագիտությունների և միջազգային դասակարգիչների հիման վրա մշակված ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N872-Ն հրամանով հաստատված «Աշխատողների, մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների» դասակարգչում ներառված մասնագիտությունների ներդաշնակեցման հարցը:</p> | Հետագայում հաշվի կառնվի: | |
| ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-02-29 թիվ 034/4572-17 գրություն | Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի | | |
| ՀՀ արդարադատության նախարարություն, 2015-09-08 թիվ 035/21372-15 գրություն | Որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության մեջ նշված «Տեխնիկ-փորձագետ՝ արտադրանքի ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերով» բառը: | Ընդունված է: | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը: |